

# Հ. ԲՈՒՍԱՐԱՌՈՒԹԻՒՆ

(Տես յէջ 446)

2278. Շան-ծուք.

Որ է Ար. անունն խոշաք ըլ-քելպ ըստ Ամբրո. ի Պէլթար գրուած  
հաճախ, « ինքն խոտ-մե է որ տերեւն ի գետինն կոչվավի եր բուսնի, և տերեւն  
» նման է Ջիթենոյ տերեւնն, և տերեւնն երկայնութիւնն մէկ մէկ թիզ կու լինի,  
« և տակն ի յայն խոտն կու  
» նմանի՝ որ թ. իր քասարի  
» ասէ, և երկու ձուղ գունդկ  
» են մէկմէկի վրայ, մէկն ի  
» ի և մէկն թերի կու լինի,  
» և ծաղկն ծիրանի լինի,  
» Բայց ասածս այն ցեղն է  
» իր տերեւն ի Քուռաթի  
» տերեւ կու նմանի, և տակն  
» երկու ջաթալ կու լինի և  
» ձուք կու նմանի. վերեւն  
» զերդ սոսինձ ի մարդուն  
» ձեռքն կու կազի. և թէ  
» սպեղանի առնես և օծես  
» ի մարդուն յանձն, զպեղծ  
» շտերն տանի, և զտաք ու  
» ուշցնին այլ տանի ո, եւ  
այն: — Փասնկ թարգման  
Պէլթարայ այս բայս գրէ լ.  
Օրենք, որ հասարակ անոն  
է անոր նման կողունիկ ունող  
բուսոց:



2279. Շան Մանուշակ.

Տես Շահպանակ:

2280. Շան շրելիք. — Տես  
Հովհանոս:

2281. Շամպալիթ.

Թուի պտղի նմանը թերք  
բուսոց ոմանց, ինչպէս Զիւն-  
ծաղկին յուր յիշուած է. Կամ  
Շան բարուտ իմանալի է:

Շան-ծուք.

2243. Եղի.

Վանական լ. Գրիգոր Աստուածարանի գրուածոց մեկնութեան մէջ յիշէ. և  
կըսէ, « Եղի՝ որ Մահպէ առն, բարտեաց նման է »: Մահպէ է Ար. ՀՀՀ,  
Բառմի և Բանջայ ցեղէն. լ. Cerasus Mahaleb, Ph. Cerésier Mahaleb, Կամ Bois de

ՏԱ. Lucie. Ամիրտ, գրէ, « Ինքն միրդ է. ի Պուտմ կու նմանի և անուշահոտ է. » և լաւ այն է որ սպիտակ լինի և ի մարգարիտ կու նմանի.. Ասէ Պտ. թէ ո ինքն ծառ-մն է, նման է Ուսի ծառին և սպիտակ ծաղկի ունի. և իր պտղին « Հաս ըլ-մահակ կու ասեն. և ասացել է գրաց լինողն, թէ լաւ այն է որ ի ի և համանդ ՞ լինի. և իր նզէն տաճկինակ կոյ լինեն, վասն իր անուշ հոտուն հա- մար, որ ի ձեռն մեայ հոտն սցո փայտիս »: Ուրիշ թժվարան մի կ'ըսէ, թէ սա և Հոռմրից հանուանամն է... քան զՄայ խոշոր է. գոյնն մթագոյն կարմրութիւն « քաշէ. և յորժամ կեղեւին մէջն լինի՝ փոքր լուսփայի մի չոփ է, գոյնն սպիտակ և և մէջն այլ սպիտակ »: — Կամարկապպին այլ զրէ. « Մէհկէպ՝ ծառ է, վրան « Գիրազ այշամիշ կ'ընեն »: — Ըստ մանց նախնեաց մերոց Նիի այն ծառն է, կամ այն ծառերէն մէկն է՝ որոց նիւղին կեղեւը տեղ տեղ տաշելով և խատուտիկ ընելով՝ Յակովի նահապետ, կու նզէր ոչխարաց ջուր խմելու աւագանին մէջ, զոր տեսնիրով մաքիք՝ կու զկէէին և խատուտիկ բրտով գառնուկներ ծնանէին: — թէ և մեր նպատակէն օտար է, այլ թէ հետապնական դէպք մի ըլլալով, և թէ ազգա- յին յիշատակ մ'այլ բերելով, նշանակնենք հետեւեալու, շատեր գիտնալով որ մարդ և մաքեաց յզութեան ատեն երեւակայութիւնն կըրնայ այսպիսի անբնական բաներ պատճառել, փորձեր են ոչխարաց վրայ այս Յակ. Նահապետին հնարքը, և շնե յածողած. համոզաւած են և դիտնականք, որ բնաբար ըլլար այս բանս, և ող- ջամփառ ընդունած են որ աստուածային կամք կամ հրաշքով եղած է. ուսանք այլ կարծեր են թէ ուրիշ բնակուն հնարքով մի կարելի եղած ըլլայ. Այսու կարծեօք պատճէ կոստանդին Պորփիւրոսեն, թէ կայսրն Ծուստիինանու ասենոք ի Փ. Ա- սիա և ի Հայս պտոյս մ'ըրաւ. հօս զինըն հնր ընդունեց Թովմաս անուամբ հա- րուստ Հայ մի. այսոր հարստոթեան ազրիւրն էր իր հօտից բազմութիւնն, որոցմէ 10,000 օշխար ընծայեց իր փառաւոր հիրին. զարհնանալին այս չէր, այլ այն՝ որ ամէն մէկ հազոր ոշխար՝ մէկ մէկ տարրեր գունով էին, և շատ չուենուած գոյներ և խայտեր ունէին: Առ հետեւեցնէ Միրանածին պատմին, թէ միթէ չ'ը մը կըրնար կարծել որ ի Հայ և յԱլսորիս գաղտնիք մի գիտողով կային՝ այսպէս զանազան գոյներով գառնուկներ ծնուցանելու: — Ընթերցողք այլ կարծեն ինչ որ լաւ հա- մարին. այս բանին համար գրէ մեր Վարդան գիտնական Վարդապետն. և Դուտ- ո զանքը Ընկուզի և Սոսի և Շնի ծնանէր ի ջուր աւագանին նկարէնս ։ Առանց տեղ մեր Ս. Գրոց թարգմանութիւնն կ'ըսէ. « Առ Քակոր գաւազան Շեր դալար « և Ընկուզի և Սոսոյ և կեղեւեաց զնոսա », եւայլն. Լատին թարգմանն դնէ դա- լար գաւազանս Կողամասի, Նշենոյ և Սոսոյ. (Virgaes Populeas virides et A- լացգալինas et ex Platanis). Այս վկայութեանց համեմատ՝ Շեր հումանշ կ'երեւի Ելոց:

## 2347. Շոնի կամ Սոնի.

Վայրի ծառոց զիխաւոր կամ հասարակներէն մէկն է, բայց յատուկ որ տե- սակն ըլլան որովէլ դժար է, որովհետեւ գրեթէ նոյն և նման յիշուին քանի մի մի մասնկամբ անուանեալ ծառք, Նոդի, Փիմի, մանաւանդ յետինս, նոյնպէս և Անդվարն, որ թէ և Ար. կամ Պ. է, բայց իրեն չ. գործածուի ի գիրս մեր. և մերձագոյն կամ նոյն թօւի ընդ Շոնոյ, որոց կըրնամք յատկացընել Լ. Pinus, Փ. Pin. Ըստ մեր գաւառականաց և Խոտուչեցոց՝ կուենոյ տեսակ կակուզ և փշածեւ տերեւներով ծառ մի է, և յարմարի Հելլենաց խոթմեան մրցանաց մէջ յաղթողներու նուրիուած պասկացն, զոր թարգմանիք մեր այս անուամբ յիշեն. ինչպէս Պր. Աստուածաբանի և անոր մեկնըն դրածն. և Շոնի ծառ՝ ո գաւառականութեան ունի զնանակ և զիմաստասիրութեան, յամարայնի և ի մերացնի միշտ սաղարթացեալ. վասն օրոյ և զժուժիկայն ի մրցմունսն առ առ պարիսօք՝ Շոնի սստովք պասկէին ։ Տերեւոց ասեղանման սուր ծայրից հա-

մար' ուսնաք համարին լ. *Abies Pectinata* կոչուածն, Փ. *Sapin pectiné* — Ամբրոտ. չի յիշեր Շոնի կամ Սոնի, և ոչ այլ վաստակոց զիրքն՝ որ յաճախ յիշէ զՄնովպար կամ Սոնովպի, նշնապէս Ամասիացին այլ, որ և զոյզ համարի Փիճի և Մարի ծառոց հետ, զայս յիշած եմք ի կարգին. միւսն այլ յեսոյ յիշեմք. իսկ հօս գրեմք ինչ որ գրած է Ամիրոտ. Այսոնվպարի համար, « որ է Փիճին. լան այն » է որ սպիտակ և թաժայ լինի.. « զիրացընող է .. և թէ զիեղեւն » եփեն և թէ զիուրն խաղաջ առ. « նեն՝ զպալզամ քաշէ, և օգտէ ակոսին և իր մոււն օգտէ այնոր. » որ արտեւանունքն թափի, և իր « պտուղն օգտէ հով հազին... իւ ցեղ մի այլ կայ որ այլ մանր կու « լինի, և այլ տաք է », եւայն. — Վաստակոց զիրքն խրատէ (Ծ.թ) հունտէ ցանել այս ծառու « աշնան » յետի ամիսն, յաւազուտ գետինն».



2348. Շոմին.

Որ Ա.ր.բառով այլ կ'ըստի Հ.Պատ.  
եսին կամ Այսպանախ, Հանասա.

Շոմինի պտուղ.

այս բառով զրէ Ամիրոտ. բայց կ'աւելցընէ, • Որ Հ. Շոմին կ'ասեն, և ծրմել, կամ « Ծիմել այլ կու ասէ (տես թ. 1195), և ինքն ցանծու է և յածվենիքն կու « բռունի, և Վայրի այլ կու լինի, և լան այն է որ ի յոնձրեւն բռունի.. կակ- ո լոցընող և գիճացընող է և զիրացընող է, և զկործքն կու կակզացընէ, և « օգտէ հազին, և հունդն օգտէ կրծոց ցախին, և զփորն կու լուծէ և զսափրան « կտրու, և շուս անցին սաստորաւն. և զէս այլ բաննարնի քամի շայնել, և օգտէ ամենայն տաք բնութեան, և հով բնութեան այլ լաւ է, յորժամ տաք եփի և մունիթատիլ լինի.. իսկն. ասէ, թէ զինքն թանձր եփեն և ի վերայ « Տարդինի ցանեն և ուտեն, օգտէ կունակին ցաւութեան. և Բարելուցոց ազգն « զայս կու ցանեն և ամսան և ձմեռն կ'ատէին. շաս օգտութին գանուին « Խոչշկին ցաւութեան. և թէ տապկեն և ուտեն՝ օգտէ տուր շերմանն որ թ. « Եսարի ասէ, որ ի ստիքայէ լինի »: — Այսափ օգուտներն թերեւս յայտնի չէին Միւ. Գոշի, երբ գրէր Արակն (Ծ.թ). թէ և թժիկ ուն բնախուէր, սուռ. « զարանելով զանուն բանջարին կունց Սպանախ, եթէ է հիւանդ, զի սպանա- նեն արժան է նախ, և ապա զնա տալ կերպակոր, զի այնքան վնասակար է. » և լուեալ ախտացեալ այր՝ ամեններն հրաժարեաց, ոչ զիտելով՝ թէ ոչ վասն և ամենայն հիւանդաց ասաց »: — Լ. *Spinacea*: Փ. *Epinarde*. Գյլաւոր տե- սակ Շոմինի. Տ. *Tetandra* յիշուած է ի թ.-Հ. ի Պագու, Եփրատայ կողմերում: Հին հեղինակն Համբուշատ զԱպանախս համարէր մշակուած կամ Ընտանի Թաղթ:

2349. Շուշան.

Անունն հասարակ է մեծ մասին առեւելիայ լեզուաց և հերթայերէն բնագրին. իսկ ծաղիկն գրեթէ անկարօտ ծանօթութեան, տեսողին և լոտին միտքը կու յափշտա- կէ. և որչափ այլ նիսթական բռյա մ՞ըլլայ՝ ուրիշներու նման, բարյական կամ ան- նիսթական գաղափար մ՞այլ կ'ազգէ. ի հնուց ի վեր Վարդի հետ ծաղկանց զլիա-

ւորութիւնը ժառանգած է, իբրեւ թագաւոր և թագուհի՝ բայց ո՞րն այս, ո՞րն այն. զի ըստ այլեւսոյ լեզուաց՝ օմնանք զվարդ թագաւոր գրեն և զնուշան թագուհի, այլք ընդ հակառակն. մեղի առաջինն յարմարագոյն գայ: — Իսկ ո՞րն աւելի գեղագանց: — Հասարակաց վարկն վարդի տուած է այս առաւելութիւնը. սակայն երբ միշտի որ հինգ՝ Աստղիկան կ'ընծայէին զայն՝ առփանաց դիցուհւոյն, իր յարգն ու վարկը Կորպունցուն էքիստոնեայ մտաց առեւ, որ անոր հակառակ՝ զնուշանն համարին օրինակ ողջախուռթեան և կուտոթեան, ազնուագոյն ձրից և զգացմոնց մարդկան, մանաւանդ իրական սեռի: Շուշան գերազանց կ'երեւի և մեր Առակախօսին մտաց, երբ բուօնց թագաւորութեան ինդրոյ մէջ ամենէն առաջ զնուշան յիշել կու տայ (հօ), և բարձրամիտ Մանուշակին ընտանութեան փափագն այլ առ Շուշան ձգէ (հը). բայց թողով զասոնք առ բանասէրս, յիշենք ծաղկիս զիլաւոր և այլանման տեսակները:

Անտարակոյս հասարակօրէն երբ Շուշան լուռի՝ այն պարզ Ապիսակ ծաղիկն յիշուի, իր ձիւնագոյն կամ կաթնագոյն հինգթերթեայ բաժակովն (<sup>1</sup>) և անուշահոտ գործարանաց գեղին թելերովն. այս է և մեր Ամասիացոյն ստորագրածն Փ. անուամբ՝ Զամպահի կամ Զենապագ, ոչից, մինչ Ար. նման չ. է Սուսան շայա:

« Ինքն սպիտակ ծաղիկ է, ճեղքած է, և մէջն գեղին, և թելեր ունի. և բարու ձրութիւն մէկ կանգնան է, և այլ աւելի և այլ պակաս այլ կու լինի. ի յամեն ճըռ գերն չոր կամ հինգ ծաղիկ ունի. և կամ տասն ծաղիկ ունի, և անուշահոտ է ու ուժով է, և տերեւն նման է Մթտին տերեւին՝ որ իր ճուղն լինի, և տակին տեսն բեւն այլ խորո է, և Քասոնու տերեւ կու նմանի, բայց կանան է: Եւ Մինհածին ու տէրն ասէ, թէ Զամպահին Ապիսակ Սուսան է, և գրոց լինազն ասէ, թէ ը» բազդին Զամպահին է. և չէ սոսոյդ»: — Լ. Lilium, Փ. Lis. Բր. Ալոլի. և այս յատուկ Սպիտակն՝ Lilium Candidum, Փ. Lis Blanc, կամ Comun, ըստ այսմ յետին նաև ակութեան շատ տեղ գտուի: — Հասարակ Շուշանաց ազգէն համարուին և L. Martagon, որ գուրի ի Հը. Կովկաս. — L. Monadelphum Szovitsianum ի Համշէն. — L. Ponticum ի Համշէն, Որիզէ: Զաղուան-դաշ լ. ևն.

### 2357. — Գիղին Շուշան.

Այն է զոր բուսաբանը անոյշ անուամբ Amaryllis կոչեն, և յատուկ գեղին տեսակը նաեւ Lutea և Lutea lutescens. Փ. Am. Jaune, և գերմանացի Գասպար Շտեռնբէրգ Բուսաբանի անուամբ Sternbergia. Ամիրտ. զրէ « Ամարդիդալին, ո որ է Դիդին Սուսանն. Թ. Աշխան Զիկտամ կ'ասէ.. թէ զտերեւն ծեծես և սպեղանի առնեսս. զտաք ուռեցնին տանի, և թէ աշքն այլ լինի տաք ուռեց» ո ի վերայ զնեն՝ օգտէ, և թէ զքքն և զտերեւն սպեղանի առնես և զնես ի ո վերայ կրակին այրածին՝ շատ օգտէ ո. Քանի մի տեսակ անի այս ազգ Շուշանն, որոց մէկմէկէ գեղեցիկ անուններ ընծայած են բուսաբանք կամ բուսամէրք, զորս մեր Բուրաստանաց երգին այլ այսպէս բովանդակէ (Ա, 167-176).

« Ի՞ր աստանօր լըռել կարեմ ծիրաններին ծանդ և զեղզ՝ Շուշան, Հիւր ի յօտար երկնէ առ մեզ եկեալ շըքնաղդ Ամարիլիս. (Լ. A. Formosissima)

և Շուշանի ճեռ աստեղաց նամանցնելով ծաղկելու ժամանակին համար այլ պայմէս իմաստասիր Փիլուն երբացեց. « Շուշանն թերեւս վասն սպիտակութեան և զի լուսասենի իսկ է, ո իսկ աստեղաց՝ նշցոյք են որ զնովու առանցք են. զի իւրաքանչիւր յատեղացն հաւաքոյթն արձակէ. ունի և բարանութիւն բանց Շուշանից. Հակառակ իմն ունի առ այլ ծաղկուն. ո զի է որ մնարակ բայց արձակէ, իսկ Շուշան ի հասանել ամարանի: յորդամ պլէքն իւսաւ մին, քանզի որ նորքին ուռագանին ծաղկին, իսկ Շուշանն առ Համբը (Շրիկ ասող), և յստ ո Շանի՝ յորժամ բոցատագագոյն է արձակն »

Նաժիշտք դառավակարք պար ի ծաղկոց ըղքեւ առնուն,  
Այն որ ծաղկէ աստեղաձեւ երկրաբօսիկ որպէս վարսամ (լ. *Albuca major*),  
Այն որ ի տիպ Խըստորոյ անփառունակ արթեալ յերկիր՝  
Բերէ բուրիեան Շուշանիկ, առեալ կոչումն Ամբրոսական (ի. *Agapanthus umbrosiano*).  
Եւ այն որ Սիրատարփ ձախեալ ի վանդ տընկարանին (*Agapanthus umbellatus*)  
Չոր հըրուանգանըն Բարեյոյս յըզէ ծաղիկ հովանաձեւ.  
Այն որ զթագի արքունուց բերէ ըզձեւ և զյորդորջումն, (Corona reale)  
Որ Ճեղանակ ամերիկան ի հերապանծ ծոպիցն ոգեալ » (ի. *Crino d'America*).

2358. — Շուշան Երկնագոյն.

Որ և Լուրջ Շուշան, կամ կապոյտ Շուշան. Կըսուի և Պուտ. զսա Բժշկա-  
րանք մեր Յ. բառիւ կոչեն, « Այրաս, որ է իսաս », այսինքն Յ. Կրէ, լ. *Iris*.  
որոյ մեկնութիւնն այլ կու տայ Ա-  
միրտ. « Սոէ Պտ. այս Այրաս անունն  
» անոր համար է՝ որ ինքն զէտ զէտ-  
» բունի (ծիրանի) գառի գունզգուն  
» ծաղիկ ունի, զեղին, ապիտակ, լազ-  
» վարդի. և բան այն է որ սեւ ու  
» պինտ և հանկուսաւ է »; Այս գեղե-  
ցիկ ազգ Շուշանի այլեւայլ տեսակներ  
ունի. յորոց կոչուածն լ. *I. Reticulata*  
գտուի ի Գարապաղ, ի Կարին, ի  
Սօմիկթ. — Պարսկային *I. Persica*,  
մեծ և Փ. Հայոց միջոց Երիքատայ կող-  
մերում. — Կովկասեանն *I. Caucasica*  
ի Մանախ, Գարապաղ, Վրաստան.  
— Պաղեստինեանն ի Սնգար լ. ուր  
յատուկ տեսակ մ'այլ գտուի *I. Sin-  
djarensis*. — *I. Sibirica*, ի Սամսն,  
Կովկաս. — *I. Guldenstadtiana*, ի  
Կարին, Էլերէկ, Սամսն. — *I. Ibe-  
riaca*, որ գեղեցկագոյն տեսակաց մեկն  
կամ ամենագեղեցիկն է և գտուի ի  
Քեղին Շուշան.



Բ-Հ., նոյնակս և *I. Paradoxa* ի Բ-Հ. ի Հեր, ի Գանձակ. — *I. Lutescens*,  
Ալիքտաղ լ. Գամբաց. — *I. Sambucina* ի Գանձակ. — *I. Flavescens* ի Բ-Հ.  
— Գերմանականն *I. Germanica* ի Բ-Հ:

2359. — Շուշան ծովային.

Մովու Շուշան կարծեմ անծանօթ է բուսաբանից, բայց եթէ նոյն վերոյիշեալ  
կապոյտն ըլլայ՝ ըստ կապուտակ գտնոյ ծովու, կամ անոյշ ջրային Շուշանն.  
առկայն եթէ յայտնուած այլ ըլլայ ոչ ծովու և ոչ ցամաքի վրայ, չատ էր մեզի  
մեր աննման Շնորհալոյ մոռք բուսցնելն ի նմանութիւն աննմանին Հոփի-  
սիմեայ.

« Ծովային Շուշան ծաղիկ, բուսեալ ի տանըս թորգում.  
Առօքեալ արեամբ Սըրբացն Պետրոսի և Պողոսի »:

Հաւանօրէն այս է և կի՞ թժշպարանին յիշածն « Շուշան ծաղիկ տակ, որ է նո-» նօֆար աղէկ վառողլ », որը ուրիշ բուսեղինաց հետ խառնել եփել և ըմբելիք մի պատրաստել խրատէ, որ Դիմոկրատիկ կոչուի. վասն զի այսով համանուն իմաստասէրն և քանի կենդանի կեցաւ՝ (ազատ) պահեց զինքն յամենայն ցաւոց ու Յիշած մենք զայ լրային Շուշան, տես Նոնոփար, (թ. 3214), ինչպէս և բնակազմութեան վրայ գրոց մի կոչէ « Զրի Շուշան, որ է պահաւ զինքլով »:

2360. — Շուշան Հովտաց.

Գերագոյն սիրերգակին (Սողոմոնի) երգածն և սիրելոցն նմանցոցածն՝ ըստ բուսաբանից նոյն իւմաստով կոչուի և. *Lilium Convallium* կամ *Convallaria*, Փ. Muguet. Մեկնիւք Ս. Գրոց այլեւայլ կարծիք ունին այս Սողոմոննեան Շուշանին վրայ, և շատք հաւանին որ լրայինն կամ եղիպտական լուտուն ըլլայ, դիտելով որ յԵրգ երգոցն զրեթէ միշտ սա յիշուի՝ արածելու կամ սննդեան իմաստի և բառից հետ, զի լսուուն այլ՝ որ Նեղոսի ջրոց վրայ կու բարձրանար՝ ուտելիք էր. և գարձեալ, համարին ումանք որ Սողոմոն այդ նմանութեամբ ուզեր է յիշեցընել իր եղիպտացի հարսը. այսպէս համարի և մէկ մեկնիւ Երգոց երգոյն (Կր. Տաթեւ.), « Շուշան հովտաց Նինոփարն՝ որ ի ջուրս բուսանի, գեղին զունով, և ոչ է Շուշան Լիրին՝ որ Սպիտակ է »: « Քալունթարեանն այլ Պարսից Լիրիփար կոչածն է կ'ըսէ. բայց մոնր սպիտակ ծաղիկ մի: իսկ բուսաբանից վերոյգրեալ և. Փ. անուամբ ճանշած ծաղիկն ընդհանուր Շուշանաց ցեղէն է, դիմացկուն արմատով, վեցթերթեան, անուշահոտ, որոյ համար և գարմանուի, եռակործ գնտաձեւ պտղով. երբեմն եղ կամ լուր կու հանէին ծաղկէն. աւելի հասարակօրէն փոնդպացուցիչ փողի մի կու հանեն՝ չորցընելով: Գրեթէ միայն մէկ տեսակ մի է այս Հովտային Շուշան, Ը. Majalis, Փ. M. de mai, (Մայիսի Շուշան), որ գտուի ի Կ. Պոյիս, և յերկու կողմանն այլ կողկառու:



Շուշան ծովային.

2361. — Շուշան Ոստին.

Մեր շատ ձեռագիր և գունագեղ աւետարանաց սկիզբը՝ էջ էջ աղիւսակներ կան նկարուած՝ պէտաէս զարդերով և ձեւերով, որ խորանը կըսուին. բաց ի զծաձեւ զարդերէն և գէմքերէ՝ կան և կերպարանք թաշնոց, ձկանց և ծաղկանց. Շնորհալի Հայր մեր և այլք մոննք այս զարդուց և գունոց խորհրդաւոր իմաստները կամ ինչ նշանակելը բացարած են. ծաղկանց մէջ կան և շուշանաձեւք, որոց մէկ տեսակը մեկնիւ մի կոչէ « Շուշան Ոստին, որ յարեգակնէ վասի »: — Ինչպէս կու վասի. — Թուի թէ վերոյիշեալ Երկնագոյն տեսակին նման պէս պէս զոյներով վասվառի. իսկ Ոստին նշանակէ ցամաք, չոր, և իրրեւ անմշակ տեղի. որով յարմարի և ծաղկին կոշուիլ:

